

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը 2017 թվականին ուշադրության կենտրոնում է պահել մարզի համայնքներում առկա հիմնախնդիրները, որոնց նա ծանոթացել էր համայնքային այցելությունների ընթացքում և դրանց մի մասի լուծման նպատակով հնարավորության սահմանում ներառել հրատապ խնդիրների լուծման միջնաժամկետ ծախսային ծրագրերի 2017 թ.-ին իրականացվելիք աշխատանքներում: Մարզի սոցիալ-տնտեսական, առողջապահական և կրթական ոլորտներում տիրող իրավիճակը քննարկվել է մարզային ենթակայությամբ գործող կրթական և առողջապահական հաստատությունների տնօրենների և մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ոլորտի գործունեությամբ զբաղվող առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների հետ հանդիպումներում: Քննարկումների արդյունքում նախանշվել են խնդիրների լուծման հնարավորություններն ու ուղիները և իրավիճակի բարելավման ուղղությամբ քայլեր ձեռնարկել: Քննարկումներ են կազմակերպվել մարզի տարածքում խմելու և ռոտզման ջրի, էլեկտրաէներգիայի անխափան մատակարարման և բնապահպանական այլ խնդիրների շուրջ:

2017 թվականի 8 ամիսների ընթացքում մարզպետի մոտ ընդունելության են եկել մարզի տարբեր համայնքների շուրջ 978 քաղաքացիներ:

Հ. Սարգսյանը մասնակցել է ՀՀ վարչապետի և ՀՀ ՏԿԶ նախարարի մոտ կազմակերպված ՀՀ մարզերին վերաբերող խնդիրներին նվիրված խորհրդակցություններին, քննարկված հարցերի շուրջ խորհրդակցություն է անցկացրել մարզպետարանում, ներկայացրել քննարկվող հարցերի շրջանակները, տվել համապատասխան հանձնարարականներ:

Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է մարզում իրականացվող հոգևոր, կրթական, մշակութային, մարզական միջոցառումներին և տոնական օրերի կապակցությամբ ուղերձներով շնորհավորել մարզի բնակիչներին:

Վայոց ձորի մարզում ս/թ մարտի 10-12-ը անց է կացվել «Բաց դռների օր» առողջապահական միջոցառումը: Միջոցառման շրջանակում Երևան քաղաքից ժամանած առաջատար բժիշկ-մասնագետներ՝ նյարդաբան, սրտաբան, ներզատաբան, ակնաբույժ, ուռուցքաբան, մանկաբարձ-գինեկոլոգ, մաշկաբան, անոթաբան, արյունաբան, ուռուլոգ, վնասվածքաբան, մանկաբույժ կատարեցին ընդունելություն: Միջոցառման ընթացքում մարզում հետազոտվել է 1154 քաղաքացի, 129-ը ուղեգրվել է Երևան, որից 38-ը վիրահատության ենթակա, 91-ը՝ կրկնահետազոտման ու կոնսուլտացիաների համար:

Կազմակերպվել է ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական հաստատությունների ղեկավարների օգոստոսյան ամենամյա խորհրդակցությունը :

ՀՀ Կառավարության կողմից հայտարարված «Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում մարզի բոլոր համայնքներում կատարվել են սանմաքրման, չնախատեսված տեղերում կուտակված աղբերի հեռացման աշխատանքներ, իսկ մայիսի 27-ին և հուլիսի 29-ին Վայոց ձորի մարզում կազմակերպվել են միասնական շաբաթօրյակներ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանի մասնակցությամբ քննարկվել են Եղեգնաձորի տարածաշրջանի համայնքների խոշորացման գործընթացի հետ առնչվող հարցերն ու լուծում պահանջող խնդիրները, ինչպես նաև այցելել են խոշորացված Վայք և Զառիթափ համայնքներ և հանդիպում ունեցել համայնքների ղեկավարների և ավագանու անդամների հետ, քննարկել առաջիկա անելիքներն ու ծրագրերը: Մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ ՎՁՄ 2017-2022 թթ զարգացման ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև քննարկվել և հավանության արժանանալուց հետո ներկայացվել է մարզային ներդրումային շուրջ 32 ծրագիր:

2017թվականի հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է ՀՀ Նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ ՏԿԶ և ՀՀ առողջապահության նախարարների, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ ՏԿԶ փոխնախարարների այցերը Վայոց ձորի մարզ:

Կազմակերպվել է Վայոց ձորի մարզխորհրդի 2 նիստերը:

Մարզպետը մշտական ուշադրության կենտրոնում է պահել մարզային ենթակայությամբ կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների աշխատանքները՝ գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով:

Համակարգել է համայնքների աշխատակազմերի, համայնքային ենթակայությամբ կրթական, մարզական և մշակութային հաստատությունների գործունեությունը:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է ՀՀ ԱԺ հերթական ընտրությունը:

Համակարգվել է ՀՀ գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

### **Արտաքին հարաբերություններ**

Մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների հրավերով մասնակցել է դեսպանատներում իրականացված միջոցառումներին:

Կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի պատվիրակությունը պաշտոնական այցով մարտի 24-ից 28-ը գտնվել է Ֆրանսիայի Հանրապետության Բանդոլ քաղաքում: Պատվիրակության կազմում ընդգրկված են եղել ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական Վասիլ Ասլանյանը և ՀՀ Վայոց ձորի Արենի համայնքի ղեկավար Բաֆֆի Խաչատրյանը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հ. Սարգսյանն ընդունել է ֆրանսահայ բարերար Օհան Հեքիմյանին, ինչպես նաև <<Որդեգրի մի գյուղ>> և <<Օագումը: Բացահայտում>> նախագծերի հեղինակ, Ավստրալիայի քաղաքացի, հայ ազգի բարեկամ Լեն Ուիքսին և քննարկել առաջիկա անելիքները:

Հուլիսի 11-15-ը <<Էկորիս Նիդերլանդ Բի ՎԻ>> ընկերության կողմից կազմակերպված ճանաչողական այցի շրջանակներում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը ՀՀ ՏԿԶ նախարար Դավիթ Լոքյանի գլխավորած պատվիրակության կազմում եղել է Նիդերլանդներում, որտեղ մասնակցել է Նիդերլանդների տարածքային զարգացման քաղաքականության պլանավորման, տարածաշրջանային մակարդակում նորարարության (էներգախնայողություն, ինտելեկտի զարգացում), տեղական կառավարման համակարգի վերաբերյալ թեմաների շուրջ կազմակերպված քննարկումներին:

Հայաստանյան պատվիրակությունը եղել է նաև Ռոտտերդամ, Հաագա, Ուտրեխտ, Վազենինգեն քաղաքներում և ծանոթացել կառավարման նիդերլանդական նորարարական մոտեցումներին:

# ՄԱՐԶԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

## Բյուջետային հատկացումներ

2017 թվականի ութ ամիսների ընթացքում մարզին 19 ծրագրերով պետբյուջեից ֆինասավորումը կատարվել է 1507864.3 հազար դրամ, որից 1055763.5 հազար դրամ ծախսվել է կրթության ոլորտում: Մշակույթի ոլորտին հատկացվել է 12436.9 հազար դրամ, որից պետական աջակցության մշակութային միջոցառումների իրականացման համար հատկացվել է 2475.0 հազար դրամ: Մարզի 29 համայնքների բյուջեներին ամրագրված սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 103.2 %-ով: ՀՀ 2017 թվականի ութ ամիսների պետական բյուջեից համայնքների հատկացված դոտացիան կազմել է 663203.9 հազ. Դրամ: Ֆինանսավորվել է 100 %-ով: ՀՀ Կառավարության որոշմամբ 2017 թվականին առաջին կիսամյակի ընթացքում փոխհատուցվել է մարզի սահմանամերձ Բարձրունի, Խաչիկ, Խնձորուտ, Նոր Ազնաբերդ և Սերս համայնքների էլեկտրաէներգիա սպառող բնակիչ-բաժանորդների կողմից հաշվարկային տարում գումարային մինչև 1440 կվտ/ժ կվտ/ժ էլեկտրաէներգիայի քանակությունների համար 50% չափով: Քանզի նշված համայնքները գազաֆիկացված չեն, գազի գնի համար նախատեսված գումարը փոխանցվում է որպես էլ.էներգիայի վարձավճար, յուրաքանչյուր բաժանորդին փոխհատուցելով 180 խոր/մ ծախսած գազի համարժեք գումարի չափով: Ութ ամիսների ընթացքում ընդամենը փոխհատուցվել է 18899.2 հազ. դրամ, բնական գազի և էլեկտրաէներգիայի գումար: Գույքահարկի և հողի հարկի փոխհատուցման նպատակով հատկացվել է 1600.0 հազ. դրամ, որը ֆինանսավորվել է 100%-ով:

## Կրթություն

Վայոց ձորի մարզում գործում է 50 հանրակրթական դպրոց, այդ թվում 14 հիմնական և 36 միջնակարգ, որոնցից 2-ը վարժարան: 2 ավագ դպրոց և 1 կրթահամալիր գործում են ՀՀ ԿԳ նախարարության ենթակայությամբ: 5 դպրոցներ գտնվում են սահմանամերձ գյուղերում, որոնցում սովորում է 312 աշակերտ: 5 դպրոցներ գտնվում են բարձր լեռնային բնակավայրերում: Մարզում գործում է տարածաշրջանային պետական քոլեջ և Տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղը:

- Մինչև 50 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 18, որտեղ սովորող աշակերտների թիվը 411 - է:
- 50-100 աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 9, որտեղ սովորողների թիվը 607 – է:
- 100 և ավելի աշակերտ ունեցող դպրոցների թիվը – 23, որտեղ սովորողների թիվը 5350 է:

Հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

Ոստիկանության կողմից հաշվառման վերցված երեխաներ չկան:

Մարզի 50 դպրոցներում 2017-2018 ուստարում սովորում է 6368 աշակերտ, որից 685-ը ավագ դպրոցներում և կրթահամալիրում:

***Մարզային ենթակայությամբ գործող 47 հանրակրթական դպրոցների աշակերտների կրթության կազմակերպման համար նախատեսված է 1 715 764,9 հազ. դրամ:***

Առաջին դասարան են ընդունվել 663 երեխա: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 114 դպրոցահասակ երեխաներ ներառական կրթության ծրագրով ընդգրկված են Եղեգնաձորի թիվ 2, Եղեգնաձորի թիվ 1, Ջերմուկի թիվ 1, Վայքի հիմնական, Ջերմուկի թիվ 3, Շատինի, Արենիի, Զատիթափի և Քարազլիսի միջն. դպրոցներում, որտեղ ստեղծված են անհրաժեշտ պայմաններ այդ երեխաների կրթական կարիքներն ապահովելու համար:

***Պետբյուջեից նրանց կրթության կազմակերպման համար նախատեսվել է 74832,3 հազ. դրամ:***

Բացվել և գործում են 25 նախակրթարաններ, որոնցից 14-ը դպրոցներում:

Դպրոցներում գործող նախակրթարաններում ընդգրկվել է 151 երեխա:

***Պետբյուջեից նրանց կրթության կազմակերպման համար նախատեսվել է 24807,9 հազ. դրամ:***

Դպրոցներում աշխատում են 973 ուսուցիչներ, որոնցից 851-ը ունեն բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն (մոտ 87%-ը), մնացած 122-ը՝ միջնակարգ մասնագիտական:

- Ուսուցիչ / աշակերտ հարաբերակցությունը կազմում է 1:6,5:
- Դասարանի միջին խտությունը 13 - է:
- Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17 ժամ:
- Մարզում գործում է 17 մանկապարտեզ 44 խմբով, որոնցում ընդգրկված է 1044 նախադպրոցական տարիքի երեխա: Նրանց հետ աշխատում են 85 դաստիարակներ:
- Խմբի միջին խտությունը կազմում է 23:
- Դաստիարակ / երեխա հարաբերակցությունը կազմում է 1:12

Սահմանված կարգով ձևավորվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների նոր կառավարման խորհուրդներ, որոնց անվանական կազմը 2016թ. մարտի 4-ին հաստատվել է Վայոց ձորի մարզպետի N 26 որոշմամբ:

Հաջողությամբ իրականացվում է <<Կայուն դպրոցական սնունդ>> ծրագիրը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցների 1-4 դր դասարանների 2552 երեխաներ դպրոցում ստանում են սնունդ:

Սահմանված կարգով կազմակերպվել են դպրոցներում ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթները: Անցկացվել է ուսուցչի թափուր տեղի համար 23 մրցույթ:

ԴՏՏՇՀ-ի կողմից մարզի 1-ին և 2-րդ և 3 դասարանների 1796 աշակերտների հատկացվել են ուսումնական պլանշետներ: Դրանց օգտագործման նպատակով վերապատրաստվել են 1-ին և 2-րդ և 3րդ դասարաններում պարապող բոլոր դասվարները: Մարզի հանրակրթական դպրոցների մեծ մասը՝ մոտ 80%, վերանորոգված են: Բոլոր դպրոցներում լուծված է ջեռուցման խնդիրը:

Մարզի 19 դպրոցներ ջեռուցվում են գազի լոկալ կաթսայատան միջոցով, մնացածը՝ էլեկտրական ջեռուցիչներով: Մարզի բոլոր դպրոցները ապահովված են համակարգիչներով, գործում է ինտերնետ կապը: Ներդրվել և աշխատում է [Dasaran.am](http://Dasaran.am) ծրագիրը, ըստ որի մուտքագրվում են պահանջվող ցուցանիշները:

Ամբողջությամբ լուծված է աշակերտների դասագրքերով ապահովվածության խնդիրը, վարձավճարները հավաքագրվել են 99%: Դպրոցներում հաջողությամբ ներդրվել է շախմատ առարկան, բոլոր դպրոցները ապահովված են անհրաժեշտ գույքով և դասագրքերով: Մարզի քաղաքային 5 դպրոցներում ներդրվել է <<Ազգային երգ ու պար>> առարկան: Նոր ուսումնական տարում <<Ազգային երգ ու պար>> առարկան կդասավանդվի մարզի բոլոր դպրոցներում, որի համար վերապատրաստվել են ևս 40 ուսուցիչներ:

Ամեն տարի փետրվար-մարտ ամիսներին անցկացվում են դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը 16 առարկաներից:

Անցած ուստարում նրանցից 52-ը մասնակցել են հանրապետական փուլին, որոնցից 11-ը արժանացել են դիպլոմների և գովասանագրերի:

Դպրոցներում սահմանված կարգով անցկացվել են 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննությունները: Մարզային ենթակայության դպրոցներում 9-րդ դասարանն ավարտել են 424, իսկ 12-րդ դասարանը 360 շրջանավարտներ:

Անցկացվել է հերթական ատեստավորման համար 115 ուսուցիչների վերապատրաստման դասընթացները որոնք կազմակերպվել են Կրթության ազգային ինստիտուտի Վայոց ձորի մասնաճյուղում:

Մարզի 8 դպրոցներում ինֆորմացիոն տեխնոլոգիաների միության կողմից ներդրվել են ռոբոտաշինության լաբորատորիաներ, որը մեծ խթան կարող է հանդիսանալ աշակերտների տեսական գիտելիքների ստեղծագործական կիրառման ուղղությամբ:

ՀՀ կառավարության որոշմամբ մարզի սոցիալապես անապահով, բազմազավակ, գոհված զինծառայողների, աշխարհագորայինների և սակավ ապահովված ընտանիքների 195 դպրոցահասակ երեխաներ հանգստացել են Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում:

Մարզի դպրոցներում բարձր հիմքերի վրա է ռազմահայրենասիրական դաստիարակության դրվածքը: Բոլոր դպրոցներն ապահովված են ուսումնական զենքով: Կրակային պատրաստության համար սահմանված գրաֆիկով մարզում տեղակայված զորավարժարանում աշակերտների համար անցկացվել է հրաձգություն ավտոմատ զինատեսակից:

### ՄՇԱԿՈՒՅԹ

	Միջոցառման անվանումը	Ծախսերը
1	Հայրենասիրական երգերի և ազգագրական պարերի փառատոն	Պետ. բյուջե 300000 դրամ
2	Երգչախմբային փառատոն	Պետ. բյուջե 340000 դրամ
3	Ֆրանկոֆոնիայի օր Վայոց ձորում	Պետ. բյուջե 205000 դրամ
4	Եվրոպական ժառանգության օրեր	Հովանավորներ
5	Մայիսյան հաղթանակներին նվիրված մասսայական միջոցառումներ(Մայիսի – 1, Մայիսի – 8, Մայիսի – 9)	Հովանավորներ
6	Մանկական թատերական փառատոն	Պետ. բյուջե 300000 դրամ
7	Լուսանկարիչների ցուցահանդես <Մշակութային Վայոց ձոր> թեմայով	Պետ. բյուջե 250000 դրամ
8	Երեխաների պաշպանության օրվան նվիրված միջոցառում	Հովանավորներ
9	<Մշակութային կանգառ> ծրագրով Թ. Ալթունյանի անվան երգի –պարի անսամբլի համերգը	Պետբյուջե
10	Նկարչական ցուցահանդես <Յուցահանդեսային կենտրոն> ՊՈԱԿ-ի կողմից	Պետբյուջե
11	Ֆիլմերի ցուցադրություն Հայաստանի ազգային կինոկենտրոնի կողմից	Պետբյուջե

### Մպորտ

	Միջոցառման անվանումը	Ծախսերը
1	ՀՀ անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 26-րդ մարզական խաղեր (Մարտ- մայիս)	Պետ. բյուջե, հովանավորներ
2	Հանրակրթական դպրոցների Ազգային ժողովի գավաթի խաղարկություն; 1-6 դասարանցիներ (Մարտ- մայիս)	Պետ. բյուջե

3	Զոհված ազամարտիկ Վ. Վարդանյանի հիշատակին նվիրված բնօրհանարտի հուշամրցաշար	հովանավորներ
4	Դպրոցականների սպորտլանդիա 1-3 և 4-7 դասարանցիների միջև	Պետ. բյուջե
5	Դպրոցականների «Մինի Ֆուտբոլ» հուշամրցաշար նվիրված Լյուդվիգ Հովհաննիսյանի հիշատակին	հովանավորներ
6	ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն նախադպրոցական հիմնարկ» մրցույթ (Մայիս- հունիս)	Պետ. բյուջե
7	ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթ (Հունիս- հուլիս)	Պետ. բյուջե

### Առողջապահություն

-Մարզային առողջապահական հաստատությունների ֆինանսավորման համար հատկացվել է 611 706.1 հազար դրամ: Մատուցվել է 29007,8 հազ. դրամի վճարովի բժշկական ծառայություններ, որից համավճար՝ 2510.0 հազ.դրամ:

-2017թ.-ին պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 30 տեղից 1-ին ութ ամիսների ընթացքում մարզպետի միջնորդագրով հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 19 քաղաքացի:

5 քաղաքացի պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզպետի կողմից ուղեգրվել են մարզի բուժհաստատություններ:

- Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 32 մեծահասակ և 3/3 երեխա:

- 2017 թ. 1-ին ութ ամիսներին հաշվառվել է 247 ծնունդ, 2016 թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 66-ով: Մահերի թիվը 2017թ. կազմում է 375, իսկ 2016թ. ութ ամիսներին՝ 341:

### Սոցիալական ապահովության բնագավառ

Զեռնարկվել է համապատասխան միջոցառումներ նպաստի համակարգին պետական բյուջեից հատկացվող միջոցների հասցեականության պահպանման և նպատակային օգտագործման ուղղությամբ:

2017 թվականի 8 ամիսների ընթացքում նպաստ է ստացել 1990 ընտանիք, որից ընտանեկան նպաստ 1520 և սոցիալական նպաստ 470 ընտանիք: Վճարվել է 462 մլն դրամ նպաստ: Հրատապ եռամսյակային օգնություն է ստացել 160 ընտանիք, վճարվել է 14.8 մլն դրամ: Մարզում կենսաթոշակառուների թիվը 10245 է, որոնց 8 ամսվա ընթացքում վճարվել է շուրջ 3.3 մլրդ. դրամ կենսաթոշակ: Ավանդների փոխհատուցում է ստացել 151 մարդ, վճարվել է 26 մլն. դրամ:

Մարզի ԶՏԿ -ներում 2017թ. 8 ամիսների ընթացքում գրանցվել է 1303 գործազուրկ, որից 226-ը տեղավորվել են աշխատանքի:

## **Գյուղատնտեսություն**

Մարզում գյուղատնտեսության զարգացման նպատակով 2017 թվականին պետական աջակցության ծրագրերով շուկայականից ցածր գներով մարզի հողօգտագործողներին հատկացվել է 525.8տ ազոտական, 8.8տ կալիումական, 7.1տ ֆոսֆորական, պարարտանյութեր, 45865լ դիզելային վառելանյութ, 3.05տ զարնանացան ցորենի, 32.558տ զարնանացան զարու, 0.115տ առվույտի, 0.02տ հնդկացորենի, 0.546տ սիսեռի և 2.096տ կորնզանի սերմացուներ: 2017թ.մարզի ընդհանուր ցանքային տաածությունը կազմել է 5172 հա, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 1680 հա-ով:

2017 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ ACBA-CREDIT AGRIKOLE բանկի միջոցով մարզի 552գյուղացիական տնտեսություններին տրվել է շուրջ 577 555 000 դրամ, 35 գյուղացիական տնտեսությունների 980900 դոլար գյուղատնտեսական նշանակության վարկեր՝ 14-20% տոկոսադրույքով, երեք տարի մարման ժամկետով և 393 գյուղացիական տնտեսությունների 375 000 000 դրամ սուբսիդավորված վարկեր 14% տոկոսադրույքով, 2 տարի մարման ժամկետով: Կառավարության կողմից սուբսիդավորվում է վարկերի 6%-ը:

2017 հունվարի 1-ի դրությամբ մարզում առկա է 19775 գլուխ խոշոր եղջերավոր անասուն/-5251/, որից կովեր՝ 8419 /-1442/ գլուխ, մանր եղջերավոր՝ 16808 (-4883), խոզեր՝ 2490 գլուխ (-137), թռչուններ՝ 66706 թև (-49851) և մեղվաընտանիք՝ 23189/+439/ փեթակ:

Եղեգնաձոր ՋՕԸ-ի կողմից իրականացվում է ռոռզման ջրի անխափան մատակարարում: Հնձվել է 2308 հա հացահատիկ, արտադրվել մոտ 3000տ հացահատիկ՝ միջին բերքը 13 ցենտներ:

Աղավնաձոր, Արփի, Ռինդ և Գնդեվազ համայնքներից արտահանվել է մոտ 250տ ծիրան, իսկ Արենի, Ռինդ, Չիվա, Արփի, Ելփին, Աղավնաձոր համայնքներից մոտ 300տ դեղձ:

Եղեգնաձորի պահածոների գործարանի արտադրական հզորությունները թույլ են տալիս տարեկան մթերել շուրջ 1600տ. պտուղ-բանջարեղեն, որը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ գյուղացիական տնտեսությունների կողմից արտադրված պտղի և բանջարեղենի իրացումը արդյունավետ և ժամանակին կազմակերպելու ուղղությամբ: 2017թ. օգոստոսի 31-ի դրությամբ մթերվել է ընդամենը 500տ. պտուղ-հատապտուղ և բանջարեղեն, որից 140տ պտուղ-հատապտուղ և 360տ բանջարեղեն:

Անասնաբուժական ծառայությունների կողմից սահմանված ժամկետներում իրականացվել է պետական պատվերով նախատեսված ախտորոշիչ և կանխարգելիչ բոլոր միջոցառումները:

**Բույսերի պաշտպանության** ծրագրով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից անվճար մարզի 11 համայնքների հատկացված 106կգ ռոդիֆակում թունանյութի միջոցով 1325հա վարակված վարելահողերի և բազմամյա տնկարկների վրա իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ:

**Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում** ընդգրկվել են Աղնջաձոր, Ռինդ, Վերնաշեն, Զառիթափ Մարավան, Կարմրաշեն, Շատին, Արտաբույնք համայնքները:

Համաձայն համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկագրի մարզում առկա է 23 հացահատիկահավաք կոմբայն, որից սարքին է 17-ը: Առկա գյուղատնտեսական տեխնիկական անհրաժեշտության դեպքում ըստ գոտիականությամբ մեր կողմից համակարգված տեղաշարժելու պայմաններում կարող ենք խնդիրներ չունենալ բերքահավաքը ժամանակին և անկորուստ իրականացնելու աշխատանքներում:

2010-2017թթ համայնքների կողմից ձեռք է բերվել 55 միավոր գյուղ տեխնիկա, իրենց գյուղ գործիքներով: Վարչության կողմից մարզպետարանում կազմակերպվել են հանդիպումներ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» ծրագրի, ինչպես նաև ՀՀ մեղվաբույծների ասոցացիայի ու մարզի ֆերմերների միջև :

## **Արդյունաբերություն**

2017թ. 1-ին կիսամյակում Վայոց ձորի մարզում, ըստ կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսվարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ընթացիկ գներով), թողարկվել է 8.0 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք, աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 3%:

-Հիմնականում աճը ապահովվել է էլ էներգիայի, հանքային ջրերի, խմիչքների և հանքաարդյունաբերության ծավալների աճով: Մարզպետարանը մարզի գործարարներին, ձեռներեցներին աջակցել է թողարկվող արտադրանքի գովազդման, հանրապետական և միջազգային ցուցահանդեսներում նրանց մասնակցության ապահովման ուղղությամբ:

-Մարզում գործարարության աշխուժացման նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի մշտական ուշադրության կենտրոնում է գտնվում բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը հետևյալ պետությունների հետ՝ Իրանի Իսլամական Հանրապետության (ՌԻՐմիա նահանգ), ՌԴ (Նիժնի-Նովգորոդի, Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետության (Մինսկի մարզ):

## **Զբոսաշրջություն**

Զբոսաշրջությունը Վայոց ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և հայտարարված է տնտեսության գերակա ճյուղ: Մարզում առկա է 1400 պատմամշակութային հուշարձաններ՝ տարածված 29 համայնքներում: Վայոց ձորի մարզում կարելի է առաջադրել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները՝ էկոտուրիզմ, գիտական տուրիզմ, բնական տուրիզմ, արկածային տուրիզմ (ժայռամազլցումներ. անձավազդիտական տուրեր, լեռնային և հետիոտն երթեր, ձիավորություն լեռնային տարածքներով, կանյոնինգ, ձկնորսություն), պատմամշակութային տուրիզմ:

2016 թվականի առաջին կիսամյակի համեմատ 2017 թվականի առաջին կիսամյակում մարզ ժամանած զբոսաշրջիկների թիվը ավելացել է 2100-ով կամ 11%-ով:

## **Ճանապարհաշինություն**

-2017 թ. ութ ամիսների ընթացքում իրականացվել 139.9 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ձևաշին պահպանման աշխատանքներ են, իսկ ընթացիկ պահպանման աշխատանքներ՝ 54.3 կմ:

## **Քաղաքաշինություն**

2018-2020 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի հետ կապված քննարկումներ են անցկացվել և կատարվել է համապատասխան ճշտումներ ՀՀ քաղաքաշինության և ՀՀ էներգետիկայի ու բնական պաշարների նախարարությունների հետ:

2017-2019 թթ. քաղաքաշինության բնագավառում քառամյա զարգացման ծրագրի հաստատման հետ կապված աշխատանքներ են տարվել մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծությունների բաժնի ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան վարչությունների հետ:

Աշխատանքներ են տարվել ՀՀ պետական բյուջեով իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերով իրականացվող օբյեկտների ընտրության, փաստաթղթերի հավաքագրման, համայնք-կազմակերպություն համագործակցության գործում:



1. Հրատապ ծրագրով ՀՀ կառավարության 16.02.2017թ. N 153-ն որոշմամբ Վայոց ձորի մարզպետարանին հատկացվել է 320.0 մլն. դրամ, որը բաշխվել է թվով 29 օբյեկտների վրա: Կայացել են մրցույթները և հայտնի են շինարարական, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունները: Շինարարությունը ընթացքի մեջ է, իրականացվել է ընդհանուր ծավալի 80 % -ը, կամ 240.0 մլն. դրամ :
2. Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ պետական հիմնարկի միջոցներով իրականացվել է՝  
Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի խմելու ջրագծի արտաքին և ներքին ցանցերի վերանորոգումը – 341.6 մլն. դրամ:  
2016թ. ընթացքում կատարվել է 187.5 մլն. դրամի շին. մոնտաժային աշխատանքներ, իսկ 2017թ. 55.0 մլն. դրամի: Աշխատանքները ավարտված են:
3. «Հաբիթաթ Ֆոր Հյուսիսի Սթրի» հիմնադրամի և Եվրամիության միջև 2014թ. դեկտեմբերի 18-ին կնքվել է դրամաշնորհային պայմանագիր: Ծրագիրը նախատեսում է 4 տարում Վայք համայնքում վերանորոգել թվով 12 բազմաբնակարան շենքերի տանիքներ, փոխել մուտքի պատուհանները, ջերմամեկուսացնել մուտքի դռները տեղադրել արևային լուսատուներ մուտքերում և շենքերի ճակատային մասերում:  
2017թ. ութ ամիսներին ավարտվել է 5 շենքերի վերանորոգման աշխատանքները, որի արժեքը կազմում է 90.0 մլն. դրամ:
4. Վերջին Օրերի Սրբեր Բարեգործական կորպորացիայի միջոցներով իրականացվում է Գողթանիկ, Աղնջաձոր, Խաչիկ և Հորս համայնքների խմելու ջրագծերի ներքին և արտաքին ցանցերի վերանորոգման աշխատանքներ, որի ընդհանուր արժեքը կազմում է 24.53 մլն. դրամ:
5. Համայնքային բյուջեով 2017թ. ութ ամիսների ընթացքում իրականացվել է 98.5 մլն. դրամի շինարարական աշխատանքներ (խմելու ջրագծեր, ճանապարհաշինություն, փողոցային լուսավորություն, խաղահրապարակի կառուցում և այլն):
6. «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման» հիմնադրամի միջոցներով իրականացվել է Քարագլուխ և Զառիթափ համայնքներում փողոցային լուսավորության կառուցման աշխատանքներ – ընդամենը 20.4 մլն. դրամ:
7. Մասնավոր ներդրումները 2017թ. ութ ամիսների ընթացքում կազմում է 1038.52 մլն. դրամ:

### **Ճարտարապետության բնագավառ**

2017թ. ութ ամիսների ընթացքում հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետը տարածքային կառավարման նախարարի 2013թ. դեկտեմբերի 19-ի N 12-ն և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013թ. դեկտեմբերի 4-ի N 371-ն համատեղ հրամանը վարչական հսկողություն է իրականացվել մարզի Եղեգնաձոր քաղաքում և Վերնաշեն, Գետափ, Քարագլուխ, Հորս, Եղեգիս, Թառաթումբ գյուղական համայնքներում:  
Աշխատանք է տարվել միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների հարակից տարածքներում գտնվող շինությունների լիարժեք ուսումնասիրմանը և խոչընդոտ առաջացնող շինությունների վերացման ուղղությամբ: Համաձայնություն է տրվել ՀՀ կառավարության թվով 3 որոշումների մեջ լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններին և թվով 6 որոշման նախագծերին:

Նշված ժամանակահատվածում առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարությանը առընթեր քաղաքաշինական պետական կոմիտե Եղեգնաձոր, Ջերմուկ քաղաքների և Արենի գյուղական համայնքի գլխավոր հատակագծերում փոփոխություն կատարելու վերաբերյալ, որոնք հաստատվել են: Բացատրական աշխատանքներ են տարվել մարզում շինությունների տրամադրման էլեկտրոնային համակարգի գործարկման վերաբերյալ և համայնքներից ընդունվել են թվով 21 շինություններ: Մարզի համայնքներին պարբերաբար տեղեկացվել է

քաղաքաշինության բնագավառում օրենսդրական ակտերում կատարված փոփոխությունների մասին և ուսումնասիրվել է քաղաքաշինության բնագավառում համայնքներում կայացված որոշումների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը: Ուսումնասիրվել և պատասխանվել է ութ ամիսների ընթացքում համայնքներից ստացած բոլոր դիմում բողոքները և պարզաբանում է տրվել քաղաքաշինության բնագավառին առնչվող խնդիրներին:

### **Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ**

2017թ-ի ութ ամիսների ընթացքում շարունակվել է ՀՀ կառավարությանն առընթեր «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի հետ համագործակցությունը, որի արդյունքում ավարտվել է Ազատեկ համայնքի խմելու ջրի արտաքին և ներքին ցանցերի վերանորոգման աշխատանքները :

Ուսումնասիրվել և քննարկվել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից բնակչությանը տրվող խմելու ջրի որակի մոնիթորինգի արդյունքները: Առաջարկվել է համայնքի ղեկավարներին անկանխատեսելի հետևանքներից խուսափելու համար պայմանագրեր կնքել ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն ՊՈԱԿ Վայոց ձորի մասնաճյուղի հետ, որի արդյունքում 2017թ-ի ութ ամիսների ընթացքում մարզում խմելու ջրի հետ կապված բնկումներ չեն արձանագրվել:

Վայոց ձորի մարզը ունի 29 համայնք: Խոշորացված 3 համայնքներում գազաֆիկացված է 9 բնակավայր, իսկ Եղեգնաձորի տարածաշրջանում 8 համայնք: Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազաֆիկացված համայնքերի և բնակավայրերի գազաֆիկացումը: Որը կնպաստի անտառների, էկոլոգիայի և դրանից բխող պոտելմների լուծմանը: Իրան Հայաստան գազամուղի շինարարության արդյունքում հնարավորություն է ստեղծվել հարակից գյուղերի գազաֆիկացման աշխատանքներն իրականացնելու համար: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բաժանորդների թիվը 2017թ.-ի ութ ամիսներին ավելացել է 74-ով, որից 9 բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, իսկ 65 անհատական տներ: Անվտանգության ապահովման համար տեղադրվել է 74 անվտանգության համակարգ:

Մարզի 29 համայնքների ղեկավարների հետ համագործակցելով հավաքագրվել են համայնքներում առկա հիմնախնդիրները, որոնք պարբերաբար թարմացվում են: